«ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ

2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2021թ.

«ՍՊԱՅԿԱ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

06.05.2021թ.
N 032102

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱՕ- 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սպայկա» ՍՊԸ-ի Մասնակցին

Վերապահումով Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Սպայկա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով Կարծիքի հիմքը

Հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս շարունակվում է հարկային դատական գործընթացն ընդդեմ «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն և մասնակից Դավիթ Ղազարյանի, նախորդ տարիների ընթացքում այլ իրավաբանական անձի միջոցով անուղղակի հարկերից խուսափելու ենթադրությամբ: Պետեկամուտների կոմիտեն կարծում է, որ տվյալ կազմակերպությունը փաստացի գտնվել է «Սպայկա» ՍՊԸ-ի ղեկավարության վերահսկողության ներքո և, ենթադրաբար, գործել է՝ ելնելով «Սպայկա» ՍՊԸ-ի շահերից: Հարկային գործի մանրամասները նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 25-ում:

Ինչպես նշվում է Ծանոթագրություն 25-ում, թեև Խումբը Դավիթ Ղազարյանին կալանքից ազատելու համար 1 միլիարդ ՀՀ դրամ է վճարել Պետեկամուտների կոմիտեի միասնական հաշվեհամարին, 2020թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում Խումբը չի ճանաչել որևէ պահուստ տվյալ գործի առնչությամբ հնարավոր պարտավորությունների գծով: Մենք չենք կարողացել ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ հնարավոր պարտավորությունների վերաբերյալ, որոնք կարող էին առաջանալ Խմբի համար 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նշված գործի հետևանքով, քանի որ հետաքննությունը դեռևս ընթացքի մեջ է: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել, թե արդյոք անհրաժեշտ են ճշգրտումներ՝ հարկային գործից բխող և Խմբին վերագրվելիք հնարավոր պարտավորությունների գծով պահուստի ստեղծման առնչությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ-ի Կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2.2-ին, որտեղ նշվում է, որ նախորդ տարվա համեմատ Խմբի համախառն շահույթը ու գործառնական շահույթը նվազել են համապատասխանաբար 5,988,532 հազար և 3,910,678 հազար ՀՀ դրամով, և որ 2020 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ և առ այսօր ունի ժամկետանց վարկային պարտավորություններ: Ինչպես նշվում է Ծանոթագրություն 2.2-ում, այս իրադարձությունները կամ իրավիճակները, տվյալ ծանոթագրությունում հիշատակված այլ հարցերի հետ մեկտեղ, վկայում են առկա էական անորոշության մասին, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման օրգաններում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի

նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը

ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Մկրտչյան
06.05.2021թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Հասույթ	6	34,716,420	57,418,157
Վաճառքի ինքնարժեք	7	(27,125,672)	(43,838,877)
Համախառն շահույթ		**7,590,748**	**13,579,280**
Իրացման ծախսեր	8	(5,367,232)	(5,655,822)
Վարչական ծախսեր	9	(1,271,002)	(2,267,084)
Այլ եկամուտներ	10	548,215	205,263
Այլ ծախսեր	11	(1,574,126)	(1,955,240)
Ակտիվներին վերաբերող շնորհից եկամուտ	12	307,978	238,862
Գործառնական շահույթ		**234,581**	**4,145,259**
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր, զուտ		(12,250,684)	(349,870)
Տոկոսային ծախսեր, զուտ	13	(6,345,405)	(4,541,993)
Վնաս մինչև հարկումը		**(18,361,508)**	**(746,604)**
Շահութահարկ	14	65,660	128,906
Տարվա վնաս		**(18,295,848)**	**(617,698)**
Այլ համապարփակ եկամուտ			
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ վնաս		**(18,295,848)**	**(617,698)**

1-30 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	133,059,631	132,505,866
Ոչ նյութական ակտիվներ	16	79,663	66,071
Հետաձգված հարկային ակտիվներ	14	339,227	283,511
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20	-	365,855
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**133,478,521**	**133,221,303**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	17	3,534,641	4,304,798
Կենսաբանական ակտիվներ	18	3,864,670	3,529,296
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19	139,394	545,855
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20	12,814,329	9,433,348
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**20,353,034**	**17,813,297**
Ընդամենը ակտիվներ		**153,831,555**	**151,034,600**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21.1	6,294,169	6,194,169
Լրացուցիչ համալրված կապիտալ	21.2	5,637,355	5,637,355
Վերագնահատման պահուստ	21.3	1,144,292	1,144,292
Չբաշխված շահույթ		22,851,724	41,147,572
Ընդամենը սեփական կապիտալ		**35,927,540**	**54,123,388**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	53,263,209	62,407,135
Ակտիվներին վերաբերող շնորհներ	23	5,822,826	6,130,804
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	224,320	234,264
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**59,310,355**	**68,772,203**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	52,494,381	26,218,941
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24	6,099,279	1,920,068
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**58,593,660**	**28,139,009**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**153,831,555**	**151,034,600**

Դավիթ Ղազարյան
Գլխավոր տնօրեն
6 մայիսի 2021թ.

Խորեն Սաֆարյան
Գլխավոր հաշվապահ

1-30 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ համալրված կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**6,194,169**	**5,637,355**	**1,144,292**	**41,765,270**	**54,741,086**
Համապարփակ եկամուտ					
Տարվա վնաս	-	-	-	*(617,698)*	*(617,698)*
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ վնաս	-	-	-	(617,698)	(617,698)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**6,194,169**	**5,637,355**	**1,144,292**	**41,147,572**	**54,123,388**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**6,194,169**	**5,637,355**	**1,144,292**	**41,147,572**	**54,123,388**
Համապարփակ եկամուտ					
Տարվա վնաս	-	-	-	*(18,295,848)*	*(18,295,848)*
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ վնաս	-	-	-	(18,295,848)	(18,295,848)
Գործարքներ սեփականատերերի հետ					
Կանոնադրական կապիտալի համալրում	*100,000*	-	-	-	*100,000*
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	100,000	-	-	-	100,000
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**6,294,169**	**5,637,355**	**1,144,292**	**22,851,724**	**35,927,540**

1-30 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2020թ.-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2020	2019
Տարվա վնաս	(18,295,848)	*(617,698)*
Ճշգրտումներ		
Մաշվածության ծախս	5,075,169	4,121,540
Ամորտիզացիայի ծախս	9,630	7,578
Պաշարների արժեզրկում	868,051	1,317,991
Արժեզրկում և դուրսգրում՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	249,878	348,432
Հիմնական միջոցների դուսգրում	52,752	-
Կրեդիտորական պարտքերի ներումից եկամուտ	(105,099)	(63,173)
Պետական շնորհներից եկամուտ	(307,978)	(238,862)
Փոխարժեքային տարբերությունից չիրացված վնաս	12,250,684	349,870
Տոկոսային եկամոտ	(73)	(50,796)
Տոկոսային ծախս	6,345,478	4,592,789
Շահութահարկ	(65,660)	(128,906)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	**6,076,984**	**9,638,765**
Փոփոխություններ՝		
Պաշարներում	770,157	(413,387)
Կենսաբանական ակտիվներում	(335,374)	(1,602,707)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	(3,840,904)	815,337
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	3,184,559	413,078
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**5,855,422**	**8,851,086**
Վճարված շահութահարկ	-	(56,251)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**5,855,422**	**8,794,835**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(6,473,158)	(23,064,984)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,433)	(36,090)
Ստացված տոկոսներ	73	50,796
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(6,496,518)**	**(23,050,278)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում, զուտ	2,861,029	17,095,068
Տոկոսների վճարում	(2,767,178)	(3,602,106)
Կանոնադրական կապիտալի համալրում	100,000	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**193,851**	**13,492,962**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(447,245)**	**(762,481)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	40,784	(16,807)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	545,855	1,325,143
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**139,394**	**545,855**

1-30 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 դեկտեմբերի 2020թ.-ին ավարտված տարվա համար

1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ. ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Սպայկա» ՍՊԸ-ի (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի, Գրինհաուս ՍՊԸ-ի և Կովկասֆուդ ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

«Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 2001թ-ին Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո՝ Դավիթ Ղազարյանի կողմից: Ընկերության գրամցման հասցեն է՝ 007 Արշակունյաց պող. 252, Երևան, ՀՀ:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- գյուղմթերքի վաճառք/արտահանում
- գյուղմթերքի արտադրություն
- կապույտ պանրի արտադրություն
- միջազգային բեռնափոխադրումներ
- բեռնատար ավտոմեքենաների ավտոտեխսպասարկում
- գյուղմթերքի մշակում

«Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2010թ-ին՝ Վրաստանի Հանրապետության օրենքների ներքո: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Վրաստան, ք.Թբիլիսի, Սաբուրթալինի շրջան, գ.Դիգոմի: «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունն է Վրաստանի տարածքում պտուղների մթերման ու Ռուսաստան արտահանման կազմակերպումը:

Գրինհաուս ՍՊԸ-ն ձեռք է բերվել «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից 2017 թ-ին: Այն հիմնադրվել է 2011թ-ին ՀՀ օրենքների ներքո: Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0043, Ծերեթելի փ., 54: Գրինհաուս ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը կապված է իրեն պատկանող ջերմոցների հետ, որոնք օգտագործվում են թարմ բանջարեղեն արտադրելու համար:

Կովկասֆուդ ՍՊԸ-ն ձեռք է բերվել «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից 2017 թ-ին: Այն հիմնադրվել է 2013թ-ին ՀՀ օրենքների ներքո: Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0006, Գարեգին Նժդեհի փ., 56/2: Կովկասֆուդ ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը կապված է իրեն պատկանող այգիների հետ, որոնք օգտագործվում են թարմ միրգ ստանալու համար:

Խմբի աշխատողների ընդհանուր քանակը 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,880 մարդ (2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,054 մարդ):

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

2.2 Հաշվապահական հաշվառման վարման անընդհատության սկզբունքը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա, և Խմբի գործունեությունը շարունակական է լինելու տեսանելի ապագայում:

2020 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը գրանցել է 18,295,848 հազար ՀՀ դրամ զումարով զուտ վնաս (2019թ-ին՝ 617,698 հազար դրամ գումարով զուտ վնաս), և նախորդ տարվա համեմատ Խմբի համախառն շահույթը ու գործառնական շահույթը նվազել են համապատասխանաբար 5,988,532 հազար և 3,910,678 հազար ՀՀ դրամով՝ կազմելով համապատասխանաբար 7,590,748 հազար և 234,581 հազար դրամ: Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական արդյունքների վատթարացումը հարուցված հարկային դատական գործի (նկարագրված է ծանոթագրություն 25-ում) և COVID-19 համավարակով պայմանավորված անորոշության բացասական ազդեցությունների հետևանքներն են Խմբի ֆինանսական գործունեության վրա, ինչը ստիպել է Խմբին 2019 և 2020 թվականների ընթացքում զգալիորեն նվազեցնել բարձր շահութաբերություն ապահովող առևտրային գործառնությունները և առաջացրել է Խմբի պլանավորած կապիտալ ներդրումների և ֆինանսավորման ծրագրերի լուրջ հետաձգումներ: Խմբի ղեկավարությունն ակնկալում է, որ Խմբի ֆինանսական ցուցանիշները կշարունակեն վերականգնվել և կայունանալ հարկային դատական գործը հանգուցալուծվելուց և COVID-19 համավարակով պայմանավորված անորոշության կայունանալուց հետո: Ինչպես նաև, հարկ է նշել, որ վերոնշյալ, 2020թ-ի 18,295,848 հազար ՀՀ դրամի տարեկան զուտ վնասը հիմնականում առաջացել է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած վերագնահատումից՝ 12,250,684 հազար դրամի չափով, ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ ՀՀ դրամի աժեզրկման արդյունքում առաջացած արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնասը չի կարող էական ազդեցություն ունենալ Խմբի անընդհատ գործելու կարողության վրա, քանի որ Խմբի հասույթի գերակշիռ մաս են կազմում արտահանումներ, որոնց գծով վաճառքը իրականացվում է արտարժույթով:

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընթացիկ վարկային պարտավորությունները կազմել են 52,494,381 ՀՀ դրամ: Ինչպես նշվում է ծանոթագրություն 21-ում, 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունեցել է ժամկետանց վարկային պարտավորություններ 16,452,551 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (2019 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,691,629 հազար ՀՀ դրամ): Մինչ օրս Խմբի ժամկետանց վարկային մնացորդները կազմում են շուրջ 14.9 միլիոն ԱՄՆ դոլար և 13.5 միլիոն Եվրո: Ինչպես նաև Խումբն ունի որոշ ապահովված բանկային վարկեր՝ 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 36,243,211 հազար դրամի հաշվեկշռային արժեքով (2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 31,011,435 հազար դրամ), որոնց վարկային պայմանագրերով Խմբի համար սահմանված են որոշակի ֆինանսական կովենանտներ, որոնք 2020թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ապահովվել Խմբի կողմից: Թեև վերը նշված դեպքերը կարող են ներկայացնել բանկային վարկերի մասով պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) իրադարձություն, ինչի դեպքում վարկերը կարող են ենթակա լինել վճարման ըստ պահանջի, այնուամենայնիվ, մինչ օրս վարկատուներից ոչ մեկը նման պահանջ չի ներկայացրել: Հետևաբար, համապատասխան վարկերը 2020թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն դասակարգվել որպես ըստ պահանջի վճարման ենթակա վարկեր: Խումբը և միջազգային վարկատու կազմակերպությունները ժամկետանց միջազգային վարկերի հետագա սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ջանքեր են կիրառում, և որպես արդյունք, 2021թ-ի փետրվարի 19-ին, Խմբի միջազգային երեք խոշորագույն վարկատու կազմակերպությունների նախաձեռնությամբ, համաշխարհային խոշորագույն խորհրդատվական ընկերությունների «Մեծ Քառյակի» անդամ հանդիսացող ընկերությանը հանձնարարել են կատարել Ընկերության գործունեության Անկախ բիզնես ուսումնասիրություն (Independent Business Review), որի նպատակներից է բավարար հիմքեր ստեղծել միջազգային վարկատուների համար ժամկետանց

վարկային պայմանագրերի պայմանների վերանայման համար: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ վերոնշյալ վարկերի պայմանների ողջամիտ վերանայման արդյունքում, Խումբը ի վիճակի է լինելու սպասարկել տվյալ վարկային պարտավորությունները:

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 20-ում, 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 5,054,658 հազար դրամի դեբիտորական պարտք մեկ գործընկերոջ գծով: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ տվյալ դեբիտորական պարտքը վերադարձվելի է և կմարվի մոտակա ապագայում:

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 25-ում, առկա է շարունակական հարկային դատական գործընթաց «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի նկատմամբ՝ հարկերից խուսափելու ենթադրությամբ, ինչը, ըստ Խմբի ղեկավարության, անընդհատ գործելու կարողության առումով էական ազդեցություն չի ունենա Խմբի վրա, հաշվի առնելով Խմբի ռազմավարական նշանակությունը Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի և առհասարակ տնտեսության համար և Խմբի դերը երկրի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման մրցակցային առավելությունը բարելավելու գործում:

Խմբի ղեկավարությունը ակնկալում է վերաբանակցել առկա վարկերի ու հնարավոր պարտավորությունների վճարման ժամկետները, իսկ պահանջվող լրացուցիչ վճարումները իրականացնել գործառնական դրամական հոսքերից, առևտրային դեբիտորական պարտքերի մարումներից կամ կապիտալի ներգրավման այլընտրանքային ձևերից՝ ինչպիսիք են նոր կամ վերանայված վարկերը/վարկային գծերը, պարտատոմսերի թողարկումը, մասնավոր տեղաբաշխումները կամ ակտիվների վաճառքը:

Ղեկավարությունը ընդունում է, որ առկա է որոշակի անորոշություն Խմբի վճարման ենթակա վարկերի վերաֆինանսավորման կամ մարման կարողության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ինչպես վերը նշված է, ղեկավարությունը ողջամտորեն ակնկալում է, որ Խումբն ունի բավարար միջոցներ և հնարավորություններ՝ տեսանելի ապագայում իր գործառնական գործունեությունը շարունակելու համար: Եթե որևէ պատճառով Խումբն ի վիճակի չի լինի պահպանել իր անընդհատ գործելու կարողությունը, ապա դա կարող է ազդել գործարարության բնականոն ընթացքում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքներով ակտիվներ իրացնելու և պարտավորությունները մարելու վրա:

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողի և շինությունների, բերքատու բույսերի ու չհասունացած բերքատու բույսերի, որոնք գնահատվում են վերագնահատման արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն Ընկերության գործառնական արժույթն է և որով ներկայացվում են այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի

ներկայացված գումարների վրա: Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները հիմնված են պատմական փորձի և այլ տարբեր գործոնների վրա, որոնք ողջամիտ են համարվում՝ ելնելով այդ պահին առկա գիտելիքներից: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում, եթե գնահատումները ազդեցություն ունեն միայն այդ ժամանակաշրջանի վրա: Եթե ազդեցությունը վերաբերում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններին, ապա վերանայումները ճանաչվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա ժամանակաշրջաններում:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ստորև.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների օգտակար ծառայության փաստացի ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն փոխվել:

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափում:
Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս՝ Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև՝

- 1-ին մակարդակ. նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են ուղղակիորեն (այսինքն, որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն, գներից ելնելով):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումը ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Չափում. անհուսալի ու կասկածելի պարտքերի պահուստ

Ընկերությունը վերանայում է իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ դրանց վերականգնելիության ապացույցներ հայտնաբերելու համար: Այդպիսի ապացույցը ներառում է հաճախորդի վճարումների հաշվառումը և հաճախորդի ընդհանուր ֆինանսական դիրքը: Եթե առկա են պարտքի չվերականգնման հայտանիշեր, ապա հաշվարկվում է փոխհատուցվող գումարը և ձևավորվում է պահուստ՝ համապատասխան անհուսալի և կասկածելի պարտքերի համար: Պահուստի գումարը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Վարկային ռիսկի ուսումնասիրությունը շարունակական գործընթաց է, և պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստ

Խումբը ուսումնասիրում է իր պաշարների գրառումները՝ դրանց վաճառելիության և օտարման պահին իրացման զուտ արժեքի վերաբերյալ ապացույցներ գտնելու համար: Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստը հիմնվում է ղեկավարության նախկին փորձի վրա՝ հաշվի առնելով պաշարների արժեքը, ինչպես նաև պաշարների յուրաքանչյուր դասի խմբաքանակի շարժը և մակարդակը:

Պահուստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Պաշարների իրացման զուտ արժեքի դիտարկման գործընթացը շարունակական է, և հնացած ու դանդաղ շրջանառելի պաշարների պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

Շահութահարկ

Շահութահարկի պահուստի որոշման համար նշանակալի դատողություն է պահանջվում: Կան գործարքներ և հաշվարկներ, որոնց համար սովորական գործունեության ընթացքում հարկային պարտավորության վերջնական գումարն անորոշ է: Խումբը ճանաչում է հարկային ստուգումների ակնկալվող խնդիրների առնչությամբ պարտավորությունները՝ հիմնվելով լրացուցիչ հարկերի վճարման պահանջի առաջացման գնահատումների վրա: Այն դեպքում, երբ այդ հարցերի հետ կապված հարկային պարտավորության վերջնական գումարը տարբերվում է սկզբնապես գրանցված գումարներից, այդպիսի տարբերությունները ազդեցություն կունենան եկամտահարկի և հետաձգված հարկի գծով պահուստների վրա՝ այդ որոշումների կայացման ժամանակահատվածում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր ընկերությունների կողմից:

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է ղեկավարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերված կամ օտարված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ընդգրկված են Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սկսած վերահսկողության սահմանման ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը: Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

3.2 Հասույթի ճանաչում

Հասույթը սովորական գործունեության ընթացքում տրամադրված ապրանքի և ծառայությունների համար ստացվելիք գումարն է և չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հանած զեղչերը և վաճառքի հետ կապված հարկերը: Խմբի կողմից ստացված հասույթի ճանաչումը կատարվում է հետևյալ հիմունքով.

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների վաճառքը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում ավարտվել է ծառայությունների մատուցումը ըստ առանձին գործարքի, ինչը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

3.3 Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտներն ու ծախսերը կազմված են հետևյալից.

- Տոկոսային եկամուտ
- Տոկոսային ծախս
- Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացող զուտ օգուտ կամ վնաս

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը անմիջականորեն վերագրելի փոխառության ծախսումները այդ ակտիվի արժեքի մասն են կազմում (կապիտալացվում են):

3.4 Աշխատակիցների վարձատրություն

Աշխատավարձերը և աշխատողների այլ հատուցումները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում համապատասխան ծառայությունը մատուցվել է:

3.5 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունն է:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.6 Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:
Ընկերության որոշակի գործունեության հետ կապված եկամուտները կամ կորուստները, ինչպիսիք են միջազգային փոխադրումները, ենթակա են հաստատագրված վճարով հարկման և դուրս է հանվում ընթացիկ հարկի հաշվարկից: Հաստատագրված հարկը հիմնվում է Ընկերության ֆիքսված պարամետրերի վրա, ինչպիսիք են բեռնատարների քանակը, այլ ոչ թե այդպիսի գործունեությունից ստացվող փաստացի եկամուտների կամ վնասների վրա:: Հաստատագրված հարկը ճանաչվել է այլ գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված ժամանակավոր տարբերությունների համար այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ հետագայում

առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Ընկերության ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս հաշվի է առնվում անորոշ որոշակի հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի, տույժերի և ուշացած վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը: Ընկերությունը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը, այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը:

Այս գնահատականը հիմնված է գնահատումների ու ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Հնարավոր է հայտնվի նոր տեղեկատվություն, որը կստիպի Ընկերությանը փոխել իր դիրքորոշումը առկա հարկային պարտավորությունների բավարար լինելու վերաբերյալ: Հարկային պարտավորությունների նման փոփոխությունները ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կայացվել է այդպիսի որոշումը:

3.7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողերի և շենքերի, որոնք հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն վերագնահատված արժեքով:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության կապիտալացված ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Հողերը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով, այնպես, որ հաշվեկշռային արժեքը էապես չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքների կիրառմամբ որոշված արժեքից: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Եթե հիմնական միջոցի (հողի և շինությունների) հաշվեկշռային արժեքը վերագնահատման արդյունքում աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք, այնուհետև կրեդիտագրվում է հիմնական միջոցի վերագնահատման պահուստի հաշվին: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկինում վերագնահատման արդյունքում շահույթում կամ վնասում ճանաչված նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում այդ նվազման չափով: Երբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այնքանով, որքանով այն գերազանցում է վերագնահատման պահուստի՝ տվյալ ակտիվի նախկինում վերագնահատման արդյունքում առաջացացած մնացորդը, եթե կլինի այդպիսին:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ/ծախս:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, իսկ արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Փոխարինված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Հիմնական միջոցի առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ հիմնվելով ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա գնահատած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը, բացառությամբ միջազգային բեռնափոխադրումների համար օգտագործվող փոխադրամիջոցների, որոնց մաշվածությունը ճանաչվում է թողարկված միավորների մեթոդով՝ համաձայն յուրաքանչյուր շահագործված կիլոմետրի: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	-	50 տարի
Սարքավորումներ	-	5-20 տարի
Այլ փոխադրամիջոցներ	-	10 տարի
Արտադրական և տնտեսական գույք	-	5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ դրանք մեծացնում են համապատասխան ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, սկսած դրանց օգտագործման համար մատչելի լինելու ամսաթվից, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Ամորտիզացիաի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.9 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները՝ շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխությունների հետ մեկտեղ, բացառությամբ նախքան բերքահավաքը, աճեցման/կենսաբանական փոխակերպման փուլում գտնվող գյուղատնտեսական արտադրանքի:

Նախքան բերքահավաքը և աճեցման/կենսաբանական փոխակերպման փուլում գտնվող գյուղատնտեսական արտադրանքը ճանաչվում է ինքնարժեքով, այնուհետև իրական արժեքով՝ հանած բերքահավաքի պահին վաճառքի ծախսերը՝ շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխությունների հետ մեկտեղ:

3.10 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարինման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար ծախսումները:

3.11 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավորված երաշխիք, որ շնորհները ստացվելու են և բոլոր կից պայմանները կատարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում շնորհը պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել նախատեսված հատուցվող ծախսերին: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրային դեբիտորական պարտքերը և թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային ներդրումները չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե դրանք բավարարում են հետևյալ երկու պայմաններին և չեն նախատեսվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- դրանք պահվում են այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- դրանց պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

<u>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ.</u>

Այս ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով: Զուտ օգուտներն ու վնասները՝ ներառյալ տոկոսներն ու շահաբաժիններ գծով ելամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում:

<u>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.</u>

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ: Ամորտիզացված արժեքից հանվում են արժեզրկման կորուստները: Տոկոսային եկամուտը, արտարժույթի փոխարկումից օգուտներն ու վնասները և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչման հետ կապված օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

<u>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումներ</u>

Այս ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով: Արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված տոկոսային եկամուտը, արտարժույթի փոխարկումից օգուտներն ու վնասները և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ զուտ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ապաճանաչման դեպքում օգուտները կամ վնասները կուտակվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերադասակարգվում են որպես շահույթում կամ վնասում չափվող:

<u>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումներ</u>

Այս ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես եկամուտ, եթե շահաբաժինը հստակորեն չի ներկայացնում ներդրման արժեքի մի մասի վերադարձը: Մյուս զուտ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և երբեք չեն վերադասակարգվում որպես շահույթում կամ վնասում չափվող:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթ կամ վնաս նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.13 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումն օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.14 Վարձակալություն

Երբ Ընկերությանն են փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները (ֆինանսական վարձակալություն), ակտիվը համարվում է անմիջականորեն գնված ակտիվ: Սկզբնապես որպես ակտիվ ճանաչված գումարը վարձակալված գույքի իրական արժեքի և վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք նվազագույն վարձավճարների ներկա արժեքի գումարներից փոքրագույնն է: Համապատասխան վարձակալական պարատավորությունը ներկայացվում է որպես պարտավորություն: Վարձակալության վճարները բաղկացած են երկու բաղադրիչից՝ մայր գումարից և տոկոսավճարներից: Տոկոսավճարների բաղադրիչը արտացոլվում է Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում, և հաշվարկվում է՝ ներկայացնելով վարձակալության պարտավորության հաստատուն մասը: Մայր գումարի բաղադրիչը նվազեցնում է փոխատուին վճարվելիք գումարի հաշվեկշիռը:

Երբ վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվում Ընկերությանը (գործառնական վարձակալություն), Պայմանագրի կնքման ժամանակ Խումբը գնահատում է, թե արդյո՞ք պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալության իրավունք, եթե այն փոխանցում է, փոխհատուցման դիմաց, հիմքում ընկած ակտիվի օգտագործումը տվյալ ժամանակահատվածում վերահսկելու իրավունքը: Ստուգելու համար, թե արդյո՞ք պայմանագիրը փոխանցում է առանձնացված ակտիվի օգտագործումը վերահսկելու իրավունքը, Խումբն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը: Այս քաղաքականությունը կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված պայմանագրերի նկատմամբ:

Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվներն օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվներ վարձակալության սկզբնական ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կլինի օգտագործման համար): Օգտագործման իրավունքով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, և ճշգրտվում են վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափման պարագայում: Օգտագործման իրավունքով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալության վճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսավճարներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքով ակտիվի

մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսավճար, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և գումարներ, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ Խումբն օգտագործում է վարձակալության սկզբնական ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը բացառում է օգտագործման իրավունքով ակտիվների, ինչպես նաև կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորությունների ճանաչումը՝ ներառյալ SS սարքավորումը: Խումբը ճանաչում է այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները որպես ծախս՝ գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում:

3.15 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

3.16 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկված բաժնեմասեր, որոնք հաշվառվում են անվանական արժեքով:

3.17 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն՝ դրանց հայտարարման ժամանակաշրջանում:

3.18 Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Խմբի այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր՝ ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Ղեկավարության կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով:

3.19 Համեմատական տվյալներ

Անհրաժեշտության դեպքում համեմատական տվյալները ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա ներկայացման փոփոխություններին համապատասխանելու համար:

4. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեությանը վերաբերող և 2020թ-ի հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից: Թեև նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները առաջին անգամ կիրառվում են 2020թ-ին, դրանք էական ազդեցություն չունեն Խմբի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտները և մեկնաբանություններ, որոնք դեռ չեն կիրառվել

Ստորև բերված են ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են, սակայն դեռ կիրառելի չեն սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ, և որոնք կիրառելիության դեպքում կորդեգրվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է

փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Խումբը կկիրառի փոփոխությունները այն համախմբված ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍԵԳՄԵՆՏՆԵՐ

Խմբի գործունեությունը հիմնականում բաժանվում է վեց ճյուղի, որոնք Խմբի հաշվետու սեգմենտներն են: Ստորև ներկայացված է հաշվետու սեգմենտների ամփոփ նկարագիրը:

1) Գյուղմթերքի վաճառք / արտահանում

Խումբը Հայաստանում և Վրաստանում իրականացնում է տարատեսակ թարմ մրգերի և բանջարեղենի սեզոնային մթերումներ, ինչպես նաև արտադրում է գյուղատնտեսական մթերք՝ միրգ և բանջարեղեն: Այդ միրգն ու բանջարեղենը պահվում է Խմբի սառնարանային պահեստներում և հիմնականում արտահանվում է: Խումբն ունի մատակարարման պայմանագրեր Ռուսաստանի խոշորագույն մանրածախ առևտրի ցանցերի հետ:

Գյուղմթերքը հիմնականում արտահանվում է «Արարատ Ֆրութ» և «Արարատ Ֆուդ» ապրանքանիշերի ներքո:

2) Միջազգային բեռնափոխադրումներ

Խումբը մատուցում է երրորդ կողմի միջազգային բեռնափոխադրման ծառայություններ՝ հիմնականում Հայաստան ներկրողների համար: Խումբը միջազգային բեռնափոխադրումները իրականացնում է հիմնականում իրեն պատկանող բեռնատարներով, սակայն, անհրաժեշտության դեպքում, ներգրավում է նաև վարձակալած բեռնատարներ: Խումբն ունի ավելի քան 300 Վոլվո և Կոռն/Շմիտց մակնիշի բեռնատարներ:

Միջազգային բեռնափոխադրման սեգմենտը մեծապես օժանդակում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի/արտահանման հիմնական սեգմենտի գործունեությանը: Բացի այդ, այն ապահովում է գործունեության արդյունավետություն՝ ստեղծելով հավելյալ արտաքին եկամուտներ:

3) Գյուղմթերքի արտադրություն

Վերջին տարիների ընթացքում Խումբը շարունակաբար զարգացնում է գյուղմթերքի սեփական արտադրության սեգմենտը (թարմ միրգ ու բանջարեղեն), որում հիմնականում ընդգրկված են ջերմոցային տնտեսությունների շահագործումը, բանջարեղենի ու մրգի բաց դաշտի մշակությունը և պտղատու ծառերի աճեցումը: Արտադրված միրգն ու բանջարեղենը արտահանվում է Խմբի կողմից, որպես գյուղմթերքի վաճառք/արտահանում իր հիմնական սեգմենտի մի մաս:

2019 թ-ի ընթացքում Խումբը ավարտին է հասցրել մոտ 50 հեկտար ջերմոցային տարածքների շինարարությունը և սկսել դրանց շահագործումը՝ այսպիսով մեծացնելով Խմբի կողմից շահագործվող ջերմոցային տնտեսության ընդհանուր տարածքը մինչև ավելի քան 105 հեկտար:

2018 – 2019թթ-ի ընթացքում Խումբը ավարտին է հասցրել մոտ 50 հեկտար պտղատու այգիների մշակումը և ծառերի տունկը՝ այսպիսով մեծացնելով պտղատու այգիների ընդհանուր տարածքը մինչև ավելի քան 125 հեկտար (հիմնականում ծիրանենի, կեռասենի, խնձորենի, սալորենի և տանձենի): Բացի այդ, 2019-2020թթ-ի ընթացքում Խումբը սկսել է մոտ 350 հեկտար ինտենսիվ այգետարածքների կառուցում: Ակնկալվում է, որ 2021-2022 թվականներին 475 հեկտարի մրգատու ծառերը կհասունանան բերքահավաքի համար:

4) Բեռնատար մեքենաների ավտոտեխսպասարկում

Ընկերությունը կառուցել է Ավտոտեխսպասարկման կենտրոն բեռնատարների համար, որը Հայաստանում «Վոլվո» բեռնատար մեքենաների պաշտոնական ներկայացուցիչն է: Ավտոտեխսպապասարկման կենտրոնը հանձնվել է շահագործման 2016թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում: Կենտրոնը սպասարկում է Ընկերությանը պատկանող բեռնատարները, ինչպես նաև ծառայություններ մատուցում երրորդ կողմերին:

5) Կապույտ պանրի արտադրություն

2017 թ-ին Խումբը սկսել է կապույտ պանրի գործարանի շինարարություն: Այդ նպատակով նա պետական շնորհի միջոցով ստացել է հողատարածք և ստորագրել վարկային պայմանագիր վարկային կազմակերպության հետ՝ կապույտ պանրի արտադրության համար սարքավորման – արտադրական գծի ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով: 2019 թ-ին կապույտ պանրի գործարանը հանձնվել է շահագործման, և Խումբը սկսել է արտադրել և վաճառել կապույտ պանիր, «Սամբիել» անվան ներքո, հիմնականում արտահանման նպատակով:

Մյուս սեգմենտները հիմնականում ներկայացնում են պլաստիկ տուփերի, պահածոյացված գյուղմթերքի և բետոնե սյուների արտադրություն:

Ստորև ներկայացված է յուրաքանչյուր հաշվետու սեգմենտին վերաբերող տեղեկատվությունը: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է գործառնական սեգմենտների հաշվետվությունները և ռազմավարական որոշումներ կայացնում՝ հիմնվելով գործառնական արդյունքների վրա: Արդյունքների գնահատման համար օգտագործվում է յուրաքանչյուր սեգմենտի գործառնական շահույթը, քանի որ ղեկավարությունը վստահ է, որ այդ տեղեկությունը ամենակարևորն է արդյունքների գնահատման գործընթացում:

Տեղեկատվություն՝ հաշվետու սեգմենտների վերաբերյալ

2020

(հազար դրամ)

	ՀԱՇՎԵՏՈՒ ՍԵԳՄԵՆՏՆԵՐ							
	Գյուղմթերքի վաճառք/ արտահանում	Գյուղմթերքի արտադրություն	Միջազգային բեռնափոխադրումներ	Կապույտ պանրի արտադրություն	Բեռնատարների սպասարկման կենտրոն	Ընդամենը հաշվետու սեգմենտներ	Այլ սեգմենտներ	Ընդամենը
Արտաքին հասույթ	*30,664,524*	*-*	*3,638,752*	*-*	*139,398*	*34,442,674*	*273,746*	*34,716,420*
Միջսեգմենտային հասույթ	*-*	*14,794,925*	*4,407,550*	*87,207*	*681,842*	*19,971,524*	*-*	*19,971,524*
Սեգմենտի հասույթ	30,664,524	14,794,925	8,046,302	87,207	821,240	54,414,198	273,746	54,687,944
Սեգմենտի գործառնական շահույթ	(198,428)	2,129,073	(1,158,030)	9,490	(159,876)	622,229	22,533	644,762
Սեգմենտի ակտիվներ	37,147,052	89,153,253	18,156,489	2,738,752	1,304,547	148,500,093	2,842,051	151,342,144
Սեգմենտի պարտավորություններ	43,189,105	60,236,070	11,469,130	1,897,766	105,069	116,897,140	374,055	117,271,195

2019

(հազար դրամ)

	ՀԱՇՎԵՏՈՒ ՍԵԳՄԵՆՏՆԵՐ							
	Գյուղմթերքի վաճառք/ արտահանում	Գյուղմթերքի արտադրություն	Միջազգային բեռնափոխադրումներ	Կապույտ պանրի արտադրություն	Բեռնատարների սպասարկման կենտրոն	Ընդամենը հաշվետու սեգմենտներ	Այլ սեգմենտներ	Ընդամենը
Արտաքին հասույթ	*52,366,446*	*-*	*4,300,686*	*-*	*209,084*	*56,876,216*	*541,941*	*57,418,157*
Միջսեգմենտային հասույթ	*-*	*12,237,015*	*4,113,053*	*955,031*	*675,964*	*17,981,063*	*-*	*17,981,063*
Սեգմենտի հասույթ	52,366,446	12,237,015	8,413,739	955,031	885,048	74,857,279	541,941	75,399,220
Սեգմենտի գործառնական շահույթ	2,744,589	2,117,638	341,955	65,949	69,282	5,339,413	22,640	5,362,053
Սեգմենտի ակտիվներ	32,737,909	86,174,990	19,451,787	5,845,221	1,359,243	145,569,150	3,236,324	148,805,474
Սեգմենտի պարտավորություններ	24,297,810	60,972,788	9,504,696	1,452,205	157,702	96,385,201	286,066	96,671,267

Հաշվետու սեգմենտների վերաբերյալ տեղեկատվության համադրումը ՖՀՄՍ-ներին համապատասխան ներկայացված տվյալների հետ:

Հաշվետու սեգմենտների տեղեկատվությունը համադրվում է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների հետ հետևյալ հիմունքով.

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հասույթ		
Հաշվետու սեգմենտներ	54,326,991	73,902,248
Այլ սեգմենտներ	273,746	541,941
Միջսեգմենտային հասույթի փոխմարում	(19,884,317)	(17,026,032)
Համախմբված հասույթ	**34,716,420**	**57,418,157**
Գործառնական շահույթ		
Հաշվետու սեգմենտներ	622,229	5,339,413
Այլ սեգմենտներ	22,533	22,640
Չբաշխված գումարներ	(410,181)	(1,390,357)
Համախմբված գործառնական շահույթ	**234,581**	**3,971,696**
Ակտիվներ		
Հաշվետու սեգմենտներ	148,500,093	145,569,150
Այլ սեգմենտներ	2,842,051	3,236,324
Չբաշխված գումարներ	2,489,411	2,229,126
Համախմբված ընդամենը ակտիվներ	**153,831,555**	**151,034,600**
Պարտավորություններ		
Հաշվետու սեգմենտներ	116,897,140	96,385,201
Այլ սեգմենտներ	374,055	286,066
Չբաշխված գումարներ	632,820	239,945
Համախմբված ընդամենը պարտավորություններ	**117,904,015**	**96,911,212**

Հասույթի վերլուծությունը ըստ տարածաշրջանների

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Ռուսաստանի Դաշնություն	32,646,039	51,251,809
Հայաստանի Հանրապետություն	1,480,401	5,297,065
Եվրոմիություն և Արևելյան Եվրոպա	236,325	869,283
Բելառուսի Հանրապետություն	336,347	-
Միացյալ Արաբական Էմիրություններ	17,308	-
	34,716,420	**57,418,157**

6. ՀԱՍՈՒՅԹ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գյուղմթերքի վաճառքից հասույթ	30,664,524	52,366,446
Միջազգային բեռնափոխադրման ծառայություններից	3,638,752	4,300,686
Ավտոտեխսպասարկման ծառայություններից	139,398	209,084
Այլ	273,746	541,941
	34,716,420	**57,418,157**

7. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գյուղմթերքի վաճառք	24,534,074	40,684,844
Միջազգային բեռնափոխադրման ծառայություններ	2,384,860	2,619,464
Բեռնատարների տեխսպասարկման ծառայություններ	63,430	109,802
Այլ	143,308	424,767
	27,125,672	**43,838,877**

Վաճառքի ինքնարժեքը ներառում է հետևյալ ծախսերը՝

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գյուղմթերքի ձեռքբերում	10,864,077	25,611,089
Կոմունալ վճարներ և ծառայություններ	3,807,005	7,961,114
Մաքսային վճարներ	2,508,413	2,223,441
Աշխատավարձ և պարգևավճարներ	3,090,463	2,525,162
Վառելանյութի գծով ծախսեր	992,724	1,230,739
Հիմնական միջոցների մաշվածություն	3,981,674	3,012,789
Այլ	1,881,316	1,274,543
	27,125,672	**43,838,877**

8. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Տրանսպորտային ծախսեր	2,169,962	2,218,817
Աշխատավարձի գծով ծախսեր	1,095,001	1,401,547
Միջնորդավճարների գծով ծախսեր	232,751	88,200
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	690,322	674,716
Հիմնական միջոցների վերանորոգում և սպասարկում	461,181	450,329
Շուկայավարում և գովազդ	18,221	68,377
Այլ	699,794	753,836
	5,367,232	**5,655,822**

9. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Աշխատավարձ	448,101	675,317
Հիմնական միջոցների մաշվածություն	238,432	270,047
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	64,432	802,729
Պարտադիր վճարներ	302,826	166,110
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	74,063	151,441
Այլ	143,148	201,440
	1,271,002	**2,267,084**

10. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	201,918	85,097
Կրեդիտորական պարտքի ներումից եկամուտ	105,099	63,173
Այլ եկամուտներ	241,198	56,993
	548,215	**205,263**

11. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Պաշարների արժեզրկում	868,051	1,317,991
Առևտրային դեբիտորական պարտքեր – արժեզրկում և դուրսգրում	249,878	348,432
Մաշվածություն	164,741	163,988
Այլ ծախսեր	291,456	124,829
	1,574,126	**1,955,240**

12. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Պետական շնորհներից եկամուտ	307,978	238,862
	307,978	**238,862**

Պետական շնորհներից եկամուտը պետական շնորհի ամորտիզացիան է՝ ճանաչված որպես հետաձգված եկամուտ (տես՝ Ծանոթագրություն 23):

13. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ, ԶՈՒՏ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտներ	73	50,796
Տոկոսային ծախսեր	(6,345,478)	(4,592,789)
Զուտ տոկոսային ծախս	**(6,345,405)**	**(4,541,993)**

14. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահույթում կամ վնասում ճանաչված

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հետաձգված հարկ		
Ժամանակավոր տարբերությունների գոյացում և հակադարձում	65,660	128,906
	65,660	**128,906**

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ

(հազար դրամ)

2020թ.	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	33,446	-	33,446
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	168,348	(91,707)	76,641
Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14,370	2,844	17,214
Հաջորդ տարի տեղափոխված հարկային վնասներ	67,347	144,579	211,926
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**283,511**	**55,716**	**339,227**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	(234,264)	9,944	(224,320)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(234,264)**	**9,944**	(224,320)
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ	**49,247**	**65,660**	**114,907**

(հազար դրամ)

2019թ.	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	37,103	(3,657)	33,446
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	122,040	46,308	168,348
Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	32,540	(18,170)	14,370
Հաջորդ տարի տեղափոխված հարկային վնասներ	-	67,347	67,347
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**191,683**	**91,828**	**283,511**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	(271,342)	37,078	(234,264)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(271,342)**	**37,078**	**(234,264)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ	**(79,659)**	**128,906**	**49,247**

15. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար դրամ)

	Հող և Շենքեր	Արտադրական գույք և Սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կահույք, տնտեսական և այլ գույք	Պտղատու բույսեր	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական/վերագնահատված արժեք							
1-ը հունվարի 2019թ	**28,725,224**	**41,839,148**	**15,130,345**	**1,070,841**	**910,503**	**35,718,179**	**123,394,240**
Ավելացումներ	1,326,288	5,000,319	7,733,573	177,546	-	8,827,258	23,064,984
Օտարումներ	(34)	(721)	(12)	(236)	-	-	(1,003)
Փոխանցումներ	7,051,769	25,543,970	-	184,594	-	(32,780,333)	-
31 դեկտեմբերի 2019թ	**37,103,247**	**72,382,716**	**22,863,906**	**1,432,745**	**910,503**	**11,765,104**	**146,458,221**
Ավելացումներ	569,997	721,686	18,767	161,422	-	5,001,286	6,473,158
Օտարումներ	-	(30,313)	-	(24,710)	-	(8,643)	(63,666)
Փոխանցումներ	579,077	19,940	-	1,631	-	(600,648)	-
31 դեկտեմբերի 2020թ	**38,252,321**	**73,094,029**	**22,882,673**	**1,571,088**	**910,503**	**16,157,099**	**152,867,713**
Մաշվածություն և արժեզրկում							
1-ը հունվարի 2019թ.	**958,443**	**3,936,309**	**3,826,163**	**327,849**	**85,875**	**-**	**9,134,639**
Տարեկան մաշվածություն	397,987	3,277,426	869,997	212,970	59,601		4,817,981
Օտարում	(34)	(5)	(12)	(214)	-	-	(265)
31 դեկտեմբերի 2019թ	**1,356,396**	**7,213,730**	**4,696,148**	**540,605**	**145,476**	**-**	**13,952,355**
Տարեկան մաշվածություն	414,296	4,221,184	945,508	226,052	59,601	-	5,866,641
Օտարում	-	(10,494)	-	(420)	-	-	(10,914)
31 դեկտեմբերի 2020թ	**1,770,692**	**11,424,420**	**5,641,656**	**766,237**	**205,077**	**-**	**19,808,082**
Զուտ հաշվեկշռային արժեք							
31 դեկտեմբերի 2019թ	**35,746,851**	**65,168,986**	**18,167,758**	**892,140**	**765,027**	**11,765,104**	**132,505,866**
31 դեկտեմբերի 2020թ	**36,481,629**	**61,669,609**	**17,241,017**	**804,851**	**705,426**	**16,157,099**	**133,059,631**

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխառությունների համար որպես ապահովում գրավադրված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 123,335,178 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 119,848,612 հազար ՀՀ դրամ):

2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հողի ու շինությունների ավելացումները հիմնականում ներառում են գոյություն ունեցող շինությունների վրա կատարված կապիտալ ծախսումները: 2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հողի ու շինությունների ավելացումները հիմնականում ներառում են գյուղատնտեսական հողի ձեռքբերումը և գոյություն ունեցող շինությունների վրա կատարված կապիտալ ծախսումները

2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հողին և շինություններին կատարված փոխանցումները հիմնականում վերաբերում են պանրի գործարանի համար ջրագծի կառուցման, ասֆալտապատման և վարչական շենքի շահագործման հանձնման համար անհրաժեշտ աշխատանքներին: 2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հողին և շինություններին կատարված փոխանցումները հիմնականում վերաբերում են պանրի գործարանին:

2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում արտադրական գույքի և սարքավորումների ավելացումները հիմնականում ներառում են ջերմոցների և այգիների համար անհրաժեշտ սարքավորումներ և արտադրական գույք: 2019 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում արտադրական գույքի և սարքավորումների ավելացումները և փոխանցումները հիմնականում ներառում են մոտ 20 և 30 հեկտար ջերմոցային տնտեսությունները Նորագավիթի տարածքի հարևանությամբ և Կապույտ պանրի գործարանի արտադրական գույքը և սարքավորումները, որոնք ավարտին են հասցվել և շահագործման հանձնվել տարվա ընթացքում:

2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում փոխադրամիջոցների ավելացումները ներառում են այգիների համար ձեռք բերված փոխադրամիջոցները: 2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում փոխադրամիջոցների ավելացումները ներառում են 100 Վոլվո FH բեռնատարները և 100 Շմիտց կիսակցորդները (թրեյլեր):

2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում անավարտ հիմնական միջոցների ավելացումները ներառում են 706,604 հազար ՀՀ դրամ կազմող կապիտալացված տոկոսները: 2019 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում՝ 1,011,620 հազար ՀՀ դրամ կապիտալացված տոկոսները:

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ անավարտ ակտիվները հիմնականում ներառում են 350 հեկտար աճեցման փուլում գտնվող պտղատու այգիներ, որոնք դեռևս չեն հասունացել բերքատվության համար: 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ անավարտ ակտիվներն հիմնականում ներառում են շուրջ 300 հեկտար աճեցման փուլում գտնվող նորատունկ պտղատու այգիները, որոնք դեռևս չեն հասունացել բերքատվության համար:

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Վաճառքի ինքնարժեք	3,981,674	3,012,789
Իրացման և բաշխման ծախսեր	690,322	674,716
Վարչական ծախսեր	238,432	270,047
Այլ ծախսեր	164,741	163,988
Կենսաբանական ակտիվներ	791,472	696,441
	5,866,641	**4,817,981**

16. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

(հազար դրամ)

	Համակարգչային ծրագրեր	Ապրանքային նշաններ	Լիցենզիաներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
1-ը հունվարի 2019թ	**57,040**	**1,988**	**-**	**-**	**59,028**
Ավելացումներ	4,231	-	27,500	4,359	36,090
31 դեկտեմբերի 2019թ	**61,271**	**1,988**	**27,500**	**4,359**	**95,118**
Ավելացումներ				23,433	23,433
Օտարում	(211)	-	-	-	(211)
31 դեկտեմբերի 2020թ	**61,060**	**1,988**	**27,500**	**27,792**	**118,340**
Կուտակված ամորտիզացիա					
1-ը հունվարի 2019թ	**20,037**	**1,432**	**-**	**-**	**21,469**
Տարեկան ամորտիզացիա	6,111	199	1,179	89	7,578
31 դեկտեմբերի 2019թ	**26,148**	**1,631**	**1,179**	**89**	**29,047**
Տարեկան ամորտիզացիա	6,253	186	2,750	441	9,630
31 դեկտեմբերի 2020թ	**32,401**	**1,817**	**3,929**	**530**	**38,677**
Զուտ հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբերի 2019թ	**35,123**	**357**	**26,321**	**4,270**	**66,071**
31 դեկտեմբերի 2020թ	**28,659**	**171**	**23,571**	**27,262**	**79,663**

Ապրանքային նշանները ներառում են "Արարատ Ֆուդ", "Արարատ Ֆրութ" և "Սպայկա Պլաստիկ" ապրանքանիշերը:

17. ՊԱՇԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գյուղատնտեսական ապրանքներ	1,565,476	1,713,535
Հումք և նյութեր	1,629,785	1,959,613
Պատրաստի արտադրանք	339,380	631,650
	3,534,641	**4,304,798**

Գյուղատնտեսական ապրանքները հիմնականում ներառում են կաթնամթերքը, մրրգեր ու բանջարեղեն: Պատրաստի արտադրանքը հիմնականում Ընկերության կողմից արտադրված Կապույտ պանիրն է և մրգային կոմպոտները:

2020թ-ին պաշարները կրճատվել են 868,051 հազար ՀՀ դրամի չափով (2019թ-ին՝ 1,317,991 հազար ՀՀ դրամի չափով)՝ մինչև իրացվելիության զուտ արժեք արժեզրկման արդյունքում: Այդպիսի արժեզրկման կորուստները ծախսագրվել են «Այլ ծախսեր» հոդվածով:

18. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հասունացման ընթացքում գտնվող բերք	3,864,670	3,529,296
	3,864,670	**3,529,296**

Կենսաբանական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով: 2020 և 2019 թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կենսաբանական ակտիվները հիմնականում ներառում են դեռևս հասունացման մեջ գտնվող լոլիկ և վարունգ:

Հաշվեկշռային արժեքների համադրումը ներկայացված է ստորև.

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հունվարի 1-ի դրությամբ	3,529,296	1,230,148
Կենսաբանական ակտիվների ինքնարժեք	13,001,226	12,418,525
Կենսաբանական ակտիվների իրական արժեքից օգուտ (տես ստորև)	2,129,073	2,117,638
Կենսաբանական ակտիվների Ճանաչումը որպես պաշար	(14,794,925)	(12,237,015)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,864,670**	**3,529,296**

Իրական արժեքներ

Բերքահավաքի ժամանակ բերքի իրական արժեքի չափումը դասակարգվել է որպես երկրորդ մակարդակի իրական արժեք՝ հիմնվելով շուկայում վաճառքի դիտարկելի տվյանլների վրա:

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Մթերված բերքի իրական արժեք հանած իրացման ծախս	14,794,925	12,237,015
Մթերված բերքի ինքնարժեքը	(12,665,852)	(10,119,377)
Կենսաբանական ակտիվների իրական արժեքից օգուտը	**2,129,073**	**2,117,638**

19. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Դրամական միջոցներ դրամարկղում	43,541	22,744
Ընթացիկ բանկային հաշիվներ	95,853	523,111
	139,394	**545,855**

20. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	10,472,913	5,773,400
Տրված կանխավճարներ	1,120,131	2,657,283
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,495,522	2,134,553
Դեբիտորական պարտքեր աշխատակիցների գծով	151,545	169,236
	13,240,111	*10,734,472*
Արժեզրկման պահուստ	(425,782)	(935,269)
	12,814,329	**9,799,203**
Ոչ ընթացիկ	-	365,855
Ընթացիկ	12,814,329	9,433,348
	12,814,329	**9,799,203**

Ընկերությունը ֆակտորինգի գծով բանկերին է փոխանցել առևտրային դեբիտորական պարտքեր՝ դրամական միջոցների դիմաց: Այդ դեբիտորական պարտքերը չեն ապաճանաչվել Ընկերության համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որովհետև Ընկերությանն են վերապահվել տվյալ դեբիտորական պարտքերի գծով հիմնական ռիսկերն ու իրավունքները, նախ և առաջ, վարկային ռիսկը: Ֆակտորինգի գծով ստացված միջոցները հաշվառվել են որպես ապահովված բանկային վարկեր:

Բյուջեի գծով դեբիտորական պարտքերը հիմնականում ներառում են ՊԵԿ–ի հարկերի միասնական հաշվին փոխանցված կանխավճարները և փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարները: Հարկերի միասնական հաշվին փոխանցված կանխավճարները ներառում են 1,000,000 հազար ՀՀ դրամ վճարը, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 25-ում: Ղեկավարությունը կարծում է, որ պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքերն ամբողջությամբ վերականգնելի են:

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 5,054,658 հազար դրամի դեբիտորական պարտք մեկ գործընկերոջ գծով, որը մինչ օրս ենթակա է վճարման՝ գործընկերոջ կողմից վճարումը կատարելու հետ կապված որոշ խնդիրների պատճառով: Ղեկավարությունը կարծում է, որ դեբիտորական պարտքերն ամբողջությամբ վերադարձվելի է և կմարվի մոտակա ապագայում:

Արժեզրկման կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հունվարի 1-ի դրությամբ	935,269	610,202
Հատկացումներ	249,878	348,432
Դուրսգրումներ	(759,365)	(23,365)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**425,782**	**935,269**

21. ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

21.1 Կանոնադրական կապիտալ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Թողարկված և վճարված հասարակ բաժնետոմսեր	6,294,169	6,194,169
	6,294,169	**6,194,169**

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 6,294,169 հազար ՀՀ դրամ (2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,194,169 հազար ՀՀ դրամ):

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ մասնակիցն է Դավիթ Ղազարյանը (2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ մասնակիցն է Դավիթ Ղազարյանը):

21.2 Լրացուցիչ վճարված կապիտալ

Լրացուցիչ վճարված կապիտալը ներառում է ընդհանուր վերահսկողության ներքո գործարքի արդյունքում դուստր ձեռնարկության ձեռքբերումից առաջացող օգուտը:

21.3 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը արտացոլում է հողերի վերագնահատումից առաջացած իրական արժեքի աճի և համապատասխան հետաձգված հարկային պարտավորության զուտ գումարը, ինչպես նաև վերագնահատումից առաջացած նվազման գումարը՝ այնքանով, որքանով այդ նվազումը գերազանցում է պահուստում այդ նույն ակտիվի գծով նախկին վերագնահատմանը վերաբերող մնացորդը, եթե լինի այդպիսին:

21.4 Շահաբաժիններ

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի չափով:

2020թ-ի և 2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում Խումբը շահաբաժիններ չի հայտարարել:

22. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Ոչ ընթացիկ		
Ապահովված վարկեր	52,720,429	57,277,509
Չապահովված պարտատոմսեր	-	5,045,720
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	542,780	83,906
	53,263,209	**62,407,135**
Ընթացիկ		
Ապահովված վարկեր	47,050,937	26,149,855
Չապահովված պարտատոմսեր	*5,414,098*	41,044
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	29,346	28,042
	52,494,381	**26,218,941**
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**105,757,590**	**88,626,076**

Վարկերի ու փոխառությունների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

(հազար դրամ)

	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2020թ.	2019թ.
Ապահովված բանկային վարկ	USD	2026	LIBOR+5%	18,787,728	16,153,894
Ապահովված բանկային վարկ	USD	2026	LIBOR+5%	12,418,836	10,737,271
Ապահովված բանկային վարկ	USD	2026	9.00%	2,438,571	2,516,112
Ապահովված բանկային վարկ	EUR	2026	7.25%	728,606	686,635
Ապահովված փոխառություն	EUR	2024	1.50%	7,970,793	6,534,356
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	2.20%	8,144,204	6,676,539
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	EURIBOR+2.90%	3,831,889	3,120,109
Ապահովված բանկային վարկ	USD	2024	8.65%	3,260,145	3,565,590
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	EURIBOR+2.40%	5,036,648	4,120,270
Ֆինանսական վարձակալություն	USD	2024	9.00%	70,927	85,097
Ապահովված բանկային վարկ	EUR	2023	EURIBOR+1.95	1,574,958	1,294,427
Ապահովված բանկային վարկ	USD	2022	8.00%	624,334	844,744
Ապահովված բանկային վարկ	AMD	2022	10%	143,296	221,336
Ֆինանսական վարձակալություն	AMD	2022	2%	19,745	26,851
Ապահովված-վարկային գիծ	USD	-	7,92%	6,580,465	6,084,439
Ապահովված-վարկային գիծ	EUR	-	6,25%	3,251,729	2,710,615
Ապահովված-վարկային գիծ	AMD	-	9.00%	609,156	1,432,284
Ապահովված-վարկային գիծ	USD	-	8.75%	1,206,242	1,502,363
Ապահովված-վարկային գիծ	USD	-	7,5%	39,512	127,224
Ապահովված փոխառություն	USD	2021	5.50%	2,145,165	1,924,044
Ապահովված փոխառություն	USD	2021	5%	954,138	858,076
Ապահովված բանկային վարկ	USD	2021	6.50%	5,237,147	4,917,238
Ապահովված բանկային վարկ	EUR	2021	6.00%	4,126,907	3,544,713
Ապահովված բանկային վարկ	RUB	2021	11.00%	778,587	2,045,691
Ապահովված բանկային վարկ	USD	2021	9.50%	1,374,291	1,689,001
Չապահովված պարտատոմս	USD	2021	8.50%	3,988,378	3,661,044
Չապահովված պարտատոմս	AMD	2021	12.50%	603,709	603,709
Չապահովված պարտատոմս	AMD	2021	12.50%	822,011	822,011
Ապահովված բանկային վարկ	USD	2020	9.50%	-	120,393
Ֆինանսական վարձակալություն	USD	2027	13.2%*	205,377	-
Ֆինանսական վարձակալություն	EUR	2027	13.2%*	265,677	-
Ֆինանսական վարձակալություն	AMD	2026	13.2%*	10,400	-
Ապահովված բանկային վարկ	USD	2025	8.00%	1,991,936	-
Չապահովված բանկային վարկ	AMD	2024	11.38%*	550,000	-
Չապահովված բանկային վարկ	AMD	2022	11.40%*	375,000	-
Ապահովված-վարկային գիծ	AMD	-	9.00%	43,241	-
Ապահովված-վարկային գիծ	RUB	-	10.50%	1,621,128	-
Չապահովված բանկային վարկ	AMD	2021	13.20%*	1,200,000	-
Չապահովված բանկային վարկ	AMD	2021	13.20%*	188,740	-
Ապահովված բանկային վարկ	USD	2021	7.50%	1,807,011	-
Ապահովված բանկային վարկ	AMD	2021	12.50%	100,861	-
Ապահովված բանկային վարկ	AMD	2021	12.50%	630,102	-
				105,757,590	**88,626,076**

** Տվյալ վարկերի տոկոսները ամբողջությամբ սուբսիդավորվում են պետության կողմից*

2020 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը տեղական բանկերի հետ ստորագրել է հետևյալ վարկային պայմանագրերը, որոնց հիմնական նպատակն է եղել վեակազմավորել ընթացիկ պարտքը առկա վարկերի վճարման միջոցով, ինչպես նաև համալրել շրջանառու կապիտալը COVID-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացման պետական աջակցման սուբսիդավորված տոկսադրույքով վարկավորման ծրագրերից օգտվելու միջոցով:

- 4,000,000 ԱՄՆ դոլար վարկ՝ 7,50% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 07 հուլիսի 2021թ.,
- 3,800,000 ԱՄՆ դոլար վարկ՝ 8,00% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 15 հոկտեմբերի 2025թ.,
- 1,200,000 հազ. դրամ սուբսիդավորված վարկ, որի մարման ամսաթիվն է 18 հունիսի 2021թ.,
- 188,740 հազ. դրամ սուբսիդավորված վարկ, որի մարման ամսաթիվն է 30 սեպտեմբերի 2021թ.,
- 500,000 հազ. դրամ սուբսիդավորված վարկ, որի մարման ամսաթիվն է 20 ապրիլի 2022թ.,
- 550,000 հազ. դրամ սուբսիդավորված վարկ, որի մարման ամսաթիվն է 18 սեպտեմբերի 2024թ.,
- 100,000 հազ. դրամ՝ 590,000 հազ. դրամ վարկային գծի շրջանակում, 12,50% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 29 դեկտեմբերի 2021թ.,
- 630,000 հազ. դրամ՝ 630,000 հազ. դրամ կրկնվող վարկային գծի շրջանակներում՝ 12,50% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 1 մարտի 2021թ.,

2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը տեղական բանկի հետ ստորագրել է հետևյալ վարկային պայմանագրերը, որոնց հիմնական նպատակն է վեակազմավորել ընթացիկ պարտքը առկա վարկերի վճարման միջոցով.

- USD 5,624,599 գումարի վարկ՝ 6,57% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 22 սեպտեմբերի 2026թ.,
- EURO 1,323,000 գումարի վարկ՝ 7.25% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 18 սեպտեմբերի 2026թ.,
- USD 8,148,551 գումարի վարկ՝ 7.73% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 25 մարտի 2024թ.,
- USD 2,070,000 գումարի վարկ՝ 8% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ամսաթիվն է 11 ապրիլի 2022թ.

2019 թ-ի նոյեմբերի 8-ին Խումբը ստորագրել է վարկային պայմանագիր տեղական բանկի հետ՝ 10 տարի ժամկետով վարկային գծի տրամադրման վերաբերյալ, 3 մլրդ ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար կամ Եվրո գումարի առավելագույն սահմանաչափով, շրջանառու միջոցների կարիքները հոգալու համար: 2020 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խմբի կողմից օգտագործված ընդհանուր գումարը կազմել է 2,302,022 ԱՄՆ դոլար՝ 8,75% տարեկան տոկոսադրույքով:

2019 թ-ի դեկտեմբերի 4-ին Խումբը տեղական բանկի հետ ստորագրել է կարճաժամկետ վարկային պայմանագիր 3.5 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի համար՝ 12 ամիս մարման ժամկետով և 9.5% տարեկան տոկոսադրույքով: 2020թ. ընթացքում վարկի մարման ժամկետը երկարաձգվել է մինչև 4 հունիսի 2021թ.:

2019 թ-ի հոկտեմբերի 14-ին Խմբի վարկային գծերը, որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը 2019 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10,507,642 հազար ՀՀ դրամ, փոխարկվել են 12 ամսվա ընթացքում վճարման ենթակա ժամկետային վարկի: 2020թ-ի նոյեմբերի 24-ին վարկերի մարման ժամկետը երկարաձգվել է մինչև 10 հունիսի 2021թ., իսկ գործող տոկոսադրույքները նվազեցվել են ԱՄՆ դոլարով արտահայտված վարկի համար՝ 7,00%-ից 6,50%, Եվրոյով արտահայտված վարկի համար՝ 7,00%-ից 6,00% և ՌԴ ռուբլով արտահայտված վարկի համար՝ 12,00%-ից 11,00%,:

Չապահովված պարտատոմսերի թողարկում

2019թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը Հայաստանի Հանրապետությունում թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, 1,400,000 ՀՀ դրամ և 7,600,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքներով: Թողարկված պարտատոմսերի տարեկան անվանական տոկոսադրույքքներն կազմում են, համապատասխանաբար, 12.5% և 8.5%, իսկ յուրաքանչյուրի մարման ժամկետը 2 տարի է:

Խմբի կողմից թողարկված բոլոր պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

2021թ-ի ապրիլի 8-ին Ընկերության միակ մասնակիցը ընդունել է որուշում՝ թողարկել ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով արտահայտված ոչ փոխարկելի, արժեկտրոնային, անվանական, որ փաստաթղթային պարտատոմսեր հետևյալ պայմաններով՝ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույն թողարկման ծավալը՝ 8,500,000 ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 1,000,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ՀՀ դրամով արտահայտված 10%-ի չափով:

Ժամկետանց վարկային պարտավորություններ և վարկային պայմանագրերի պայմանների խախտում

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ժամկետանց վարկային պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 16,452,551 հազար ՀՀ դրամ (2019 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,691,629 հազար ՀՀ դրամ):

2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 36,243,211 հազար դրամի ընդհանուր հաշվեկշռային արժեքով (2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 31,011,435 հազար դրամ) բանկային վարկերի վարկային պայմանագրերով Խմբի համար սահմանված են որոշակի ֆինանսկան կովենանտներ, որոնք 2020թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ապահովվել Խմբի կողմից:

Վերը նշված դեպքերը կարող են ներկայացնել բանկային վարկերի մասով պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) իրադարձություն, ինչի դեպքում վարկերը կարող են ենթակա լինել վճարման ըստ պահանջի, այնուամենայնիվ, մինչ օրս վարկատուներից ոչ մեկը նման պահանջ չի ներկայացրել: Հետևաբար, համապատասխան վարկերը 2020թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն դասակարգվել որպես ըստ պահանջի վճարման ենթակա վարկեր:

Խումբը և միջազգային վարկատու կազմակերպությունները ժամկետանց միջազգային վարկերի հետագա սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ջանքեր են կիրառում, և որպես արդյունք, 2021թ-ի փետրվարի 19-ին, Խմբի միջազգային երեք խոշորագույն վարկատու կազմակերպությունների նախաձեռնությամբ, համաշխարհային խոշորագույն խորհրդատվական ընկերությունների «Մեծ Քառյակի» անդամ հանդիսացող ընկերությանը հանձնարարել են կատարել Ընկերության գործունեության Անկախ բիզնես ուսումնասիրություն (Independent Business Review), որի նպատակներից է բավարար հիմքեր ստեղծել միջազգային վարկատուների համար ժամկետանց վարկային պայմանագրերի պայմանների վերանայման համար:

Վարկերը և փոխառությունները ապահովված են հետևյալ գրավներով՝

- Անշարժ գույք (Ծան. 15)
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծան. 20)
- Ընթացիկ բանկային հաշիվների շրջանառություն
- Սեփականատիրոջ՝ Դավիթ Ղազարյանի անձնական երաշխավորություն:
- Խմբի ընկերությունների կողմից երաշխավորություններ

23. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Հունվարի 1-ի դրությամբ	6,130,804	6,369,666
Շնորհի ամորտիզացիայից եկամուտ (ծանոթ. 12)	(307,978)	(238,862)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,822,826**	**6,130,804**

Պետական Շնորհներ

2017թ-ի ընթացքում Խումբը պետական շնորհի միջոցով Երևանի քաղաքապետարանից ստացել է 6,369,666 հազար ՀՀ դրամ իրական արժեքով 76.4 հեկտար հողատարածք՝ պայմանով, որ մինչև 2020թ-ը այդտեղ կկառուցի պանրի գործարան և ջերմոցային տնտեսություն: 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն արդեն ավարտել է պանրի գործարանի և ջերմոցային տնտեսության շինարարությունը և նույն տարում հանձնել է դրանք շահագործման:

Ակտիվներին վերաբերող շնորհը ամորտիզացվում է համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

24. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,522,694	1,251,308
Ստացված կանխավճարներ	589,103	85,943
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	512,093	475,598
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	374,515	11,856
Հաշվեգրված ծախսերի պահուստ	95,636	79,834
Այլ կրեդիտորական պարտքեր	5,238	15,529
	6,099,279	**1,920,068**

25. ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՄ ԳՈՐԾ

2019 թվականի ապրիլի 4-ին Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) քննչական վարչությունում, «Գրինպրոդուկտ» ՍՊԸ ռեզիդենտ իրավաբանական անձի առևտրային գործունեության առնչությամբ, մեղադրանք է առաջադրվել «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի ենթադրյալ առկայությամբ, որը սահմանում է պատիժ՝ հարկերից, տուրքերից կամ պարտադիր այլ վճարներից խուսափելու համար:

ՊԵԿ քննչական վարչությունը մեղադրում է, որ հարկերից խուսափելու մտադրությամբ, 2015 թ-ի հունվարի 1-ից մինչև 2016 թ-ի հունվարի 11-ը ընկած ժամանակահատվածում «Սպայկա» ՍՊԸ-ի ղեկավարությունը փաստացիորեն վերահսկել է «Գրինպրոդուկտ» ՍՊԸ-ին, որն օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պատշաճ կերպով չի հայտարարագրել և չի ներկայացրել մաքսային մարմիններին իր կողմից ներմուծվող ապրանքի փաստացի տվյալները: Մասնավորապես, ըստ ՊԵԿ քննչական վարչության, մաքսազերծման, ԱԱՀ-ի և այլ հարկային վճարումների նպատակով մաքսային մարմիններին ներկայացվել են կեղծ տվյալներ, որոնց

համաձայն ներմուծված ապրանքները ազատված են մաքսատուրքից և ԱԱՀ-ից: Ըստ քրեական վարույթն իրականացնող մարմնի, դա թույլ է տվել խուսափել 7,036,666 հազար ՀՀ դրամ փաստացի հարկային պարտավորությունների վճարումից:

Դավիթ Ղազարյանը, որպես «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, առարկություն է ներկայացրել մեղադրանքում վնասի չափի հաշվարկման, ինչպես նաև հանցանքը կատարողի վերաբերյալ՝ հինվելով հետևյալի վրա.

- Ներմուծվող ապրանքի մաքսազերծման համար կեղծ տվյալների ներկայացման մեղադրանքը, ըստ էության, վերաբերվում է ապրանքը ներմուծող Գրինպրոդուկտ ՍՊԸ-ին, որից «Սպայկա» ՍՊԸ-ն ապրանքը միայն գնել և արտահանել է այլ երկիր:
- Գրինպրոդուկտ ՍՊԸ-ն չուներ բավարար ֆինանսական միջոցներ վիճարկվող հարկային պահանջները բավարարելու համար, և ՊԵԿ քննչական վարչությունը սուբյեկտիվորեն առաջադրել է մեղադրանքներն ընդդեմ «Սպայկա» ՍՊԸ-ի, քանի որ «Սպայկա» ՍՊԸ-ն գործարքի կողմն է (գնորդը):
- Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն՝ ապրանք արտահանելու պարագայում արտահանող ընկերությունն այդ ապրանքի ներմուծման ժամանակ վճարած ԱԱՀ-ն հետ է ստանում կամ հաշվանցում է վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին:
- Նույնիսկ եթե հիպոթետիկ սցենարով ենթադրվում է, որ «Սպայկա» ՍՊԸ-ն «Գրինպրոդուկտ» ՍՊԸ-ի կողմից ներմուծված ապրանքների փաստացի շահառուն է, ապա այդ ապրանքները արտահանելիս «Սպայկա» ՍՊԸ-ն պետք է իրավունք ունենար պետությունից հետ ստանալու (հաշվանցելու) ԱԱՀ-ն: Այդ պատճառով, ենթադրյալ չվճարված ԱԱՀ-ն պետք է զրոյացվի և ճշգրտվի ՊԵԿ-ի վերջնական ստուգման ակտում կամ հաշվարկվի (նվազեցվի) ի օգուտ Սպայկա ՍՊԸ-ի:

Վերոհիշյալ մեղադրանքի կապակցությամբ, 2019 թվականի ապրիլի 8-ին, դատարանի որոշման հիման վրա, «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Ղազարյանը կալանավորվել է:

Հայաստանի խոշորագույն գյուղատնտեսական ընկերության գործունեության շարունակականությունը չվտանգելու համար, միաժամանակ պահպանելով ամուր դիրքորոշումն առ այն, որ գործը որևէ իրավական առնչություն չունի «Սպայկա» ՍՊԸ-ի հետ, 2019 թ-ի մայիսի 3-ին 1,000,000 հազար ՀՀ դրամ է փոխանցվել «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից ՊԵԿ-ի միասնական հարկային հաշվին, և նույն օրը Դավիթ Ղազարյանը ազատվել է կալանքից:

Ներկայումս քննությունը ընթացիկ փուլում է, և ՊԵԿ-ում իրականացվում է վճարման ենթակա հարկային պարտավորության ճշգրիտ գումարի հաշվարկման գործընթացը, որին կհաջորդի գործի կարգավորումն ու փակումը: Եթե քննությամբ ընդունվի գործի հետ կապված ցանկացած հարկային պարտավորությունների պարտադիր կատարման կամ կարգավորման որոշում, ապա միասնական հարկային հաշվին մուտքագրված 1,000,000 հազար ՀՀ դրամի գումարը կհամարվի որպես տվյալ գործով չվճարված մաքսատուրքերի մարման վճար:

Խմբի կողմից 2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ֆինանսական հաշվետվություններում գործի առնչությամբ պահուստ չի ճանաչվել, քանի որ Խմբի ղեկավարությունը վստահ է, որ գործի պարտադիր կատարման կամ կարգավորման հետևանքով առաջացած ցանկացած պարտավորություն (որն էլ որ կլինի արդյունքում) չի ունենա որևէ իրավական առնչություն Խմբի հետ և չի կարող նրան վերագրվել:

26. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական ռիսկերի գործոններ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ղեկավարությունը լիովին պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

1) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով կնվազեն հաշվետու ամսաթվի դրությամբ առկա ֆինանսական ակտիվներից առաջացած ապագա դրամային հոսքերը: Այս ռիսկն առաջանում է ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և բանկերում պահվող դրամական միջոցներն ու դրանց համարժեքները:
Խումբը որդեգրել է քաղաքականություն՝ ապահովելու, որ ապրանքի ու ծառայությունների վաճառքը կատարվի պատշաճ վարկային պատմություն ունեցող հաճախորդներին, և շարունակաբար վերահսկում է իր դեբիտորական պարտքերի իրավիճակը: Փոխառությունները տրամադրվում են կապակցված կողմերին: Դրամային մնացորդները պահվում են վարկային պորտֆելի բարձր որակ ապահովող ֆինանսական հաստատություններում:

Պարտքային ռիսկի ազդեցությունը

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բերված է ստորև.

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12,814,329	9,799,203
Ընթացիկ բանկային հաշիվներ	95,853	523,111
	12,910,182	**10,322,314**

2) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը անկարող կլինի կատարել իր պարտավորությունները: Իրացվելիության ռիսկը առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Այդ անհամապատասխանությունը կարող է մեծացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը: Խումբն ունի այդպիսի կորուստների նվազեցմանն ուղղված ընթացակարգեր, որոնցից են բավարար դրամային միջոցներ և այլ բարձր իրացվելիության ընթացիկ ակտիվներ պահելը, ինչպես նաև համապատասխան վարկային միջոցների առկայությունը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ գնահատված տոկոսավճարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

31 դեկտեմբերի 2020թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի
Վարկեր և փոխառություններ	105,757,590	114,889,793	36,675,085	19,934,009	46,135,468	12,145,231
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,099,279	6,099,279	5,510,176	589,103	-	-
	111,856,869	**120,989,072**	**42,185,261**	**20,523,112**	**46,135,468**	**12,145,231**

31 դեկտեմբերի 2019թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի
Վարկեր և փոխառություններ	88,626,076	98,129,731	5,583,551	23,591,431	54,523,573	14,431,176
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,920,068	1,920,068	1,920,068	-	-	-
	90,546,144	**100,049,799**	**7,503,619**	**23,591,431**	**54,523,573**	**14,431,176**

3) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժութային ռիսկ

Արտաժութային ռիսկն արտարժույթի փոխարժեքների տատանման հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանման ռիսկն է: Այն առաջանում է, երբ ապագա առևտրային գործարքներն ու ճանաչված ակտիվներն ու պարտավորությունները արտահայտվում են մի արժույթով, որը Խմբի գործառնական արժույթը չէ: Խումբը ենթարկվում է արտարժութային ռիսկի հիմնականում ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով արտահայտված գործարքների արդյունքում: Խմբի ղեկավարությունը ուշադրության կենտրոնում է պահում փոխարժեքային տատանումները և համապատասխան միջոցներ ձեռնարկում:

Ստորև ներկայացվում է Խմբի ենթարկվածությունը արտարժութային ռիսկին.

31 դեկտեմբեր 2020թ.

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Լարի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,118,369	23,992	8,514,128	17,882
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,267	782	61,409	1,727
	2,139,636	*24,774*	*8,575,537*	*19,609*
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	63,130,203	34,931,412	2,399,715	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	435,401	1,143,617	1,008,615	22,100
	63,565,604	*36,075,029*	*3,408,330*	*22,100*
Զուտ ենթարկվածություն	(61,425,968)	(36,050,255)	5,167,207	(2,491)

31 դեկտեմբեր 2019թ.

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Լարի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,154,998	234,721	6,455,970	7,411
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	437	339	523,329	323
	1,155,435	*235,060*	*6,979,299*	*7,734*
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	54,962,890	28,687,664	2,045,691	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	515,116	194,047	419,676	8,972
	55,478,006	*28,881,711*	*2,465,367*	*8,972*
Զուտ ենթարկվածություն	(54,322,571)	(28,646,651)	4,513,932	(1,238)

Զգայունության վերլուծություն

ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

10% արժևորում

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Շահույթ կամ վնաս	6,142,597	5,432,257	3,605,026	2,864,665	(516,721)	451,393

10% արժեզրկում

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Շահույթ կամ վնաս	(6,142,597)	(5,432,257)	(3,605,026)	(2,864,665)	516,721	(451,393)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Փոփոխական տոկոսադրույքներով վարկերը Խմբին ենթարկում են տոկոսադրույքի ռիսկի՝ դրամական միջոցների ապագա հոսքերի փոփոխության առումով: Հաստատուն տոկոսադրույքներով փոխառությունները Խմբին ենթարկում են տոկոսադրույքի ռիսկի՝ իրական արժեքների փոփոխության առումով: Խմբի ղեկավարությունը ուշադրության կենտրոնում է պահում տոկոսադրույքների տատանումները և համապատասխան միջոցներ ձեռնարկում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները ներկայացված են հետևյալ կերպ՝

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	67,939,421	53,200,105
Փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	37,818,169	35,425,971
	105,757,590	**88,626,076**

Ընկերությունը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի արդյունավետ ֆինանսական կառուցվածք՝ միաժամանակ խուսափելով ավելորդ պարտքերի առաջացումից: Այստեղ հաշվի են առնվում Խմբի՝ պարտքերի տարբեր դասերի ենթակայության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և ճշգրտումներ անում՝ հաշվի առնելով տնտեսական պայմանների փոփոխությունները և համապատասխան ակտիվների ռիսկի առանձնահատկությունները:

27. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին՝ հաշվետու ամսաթվի դրությամբ:

28. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Գործարար միջավայր

Որպես զարգացող շուկայական տնտեսական համակարգեր, Հայաստանը և Ռուսաստանը շարունակում են անցնել քաղաքական և տնտեսական վերափոխումներ՝ կապված կենտրոնացված պլանավորումից դեպի ազատ շուկա անցման հետ: Հայաստանը և Ռուսաստանը չեն ավարտել զարգացած ինստիտուցիոնալ համակարգի և ենթակառուցվածքների ձևավորման

գործընթացը, որոնք սովորաբար առկա են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններում:

Նման տնտեսություններում գործող ընկերությունների համար վերը նշվածը առաջացնում է արտաքին գործոնների, ինչպիսիք են հարկային վարչարարությունը, կապիտալի հոսքի վերահսկողությունը, արտարժույթի գործառնությունները, ձևականությունները, արտահանման / ներմուծման սակագները և այլն, շարունակական կամ երբեմն կտրուկ փոփոխությունների բնորոշ ռիսկ, այդ գործոնները կարող են բացասաբար ազդել Խմբի հետագա ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող արժանահավատորեն գնահատել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում՝ Խմբի կայունությունն ապահովելու համար:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են զարգացած շուկայական տնտեսություններում, Հայաստանում դեռևս այստեղ չեն կիրառվում: Չնայած Խմբի հիմնական միջոցները հիմնականում ապահովագրված են, այնուամենայնիվ, Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր ակտիվների համար, ուստի գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության հաճախակի փոփոխությունները և Հարկային օրենսգրքի սխալ մեկնաբանությունից և գործնականում սխալ կիրառությունից բխող վիճաբանությունները:

Այդ հանգամանքները կարող են Հայաստանում գործող ընկերությունների համար ստեղծել հարկային ռիսկեր, ինչը բնորոշ է աշխարհի ցանկացած այլ զարգացող շուկայական տնտեսություններին: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հիմնվելով կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական դրույթների և դատական որոշումների իրենց մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց գերակայության դեպքում ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է զգալի լինել:

29. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Խմբի կապակցված կողմերում ներառվում են նրա բաժնետերերը, վերջիններիս և հիմնական ղեկավար անձնակազմին վերաբերող այլ կազմակերպություններն ու անհատները:

Խմբի վերջնական վերահսկող կողմը Դավիթ Ղազարյանն է, ում պատկանում է Ընկերության 100% բաժնեմասը:

Ստորև ներկայացված են փոխկապակցված անձանց հետ կատարված գործարքներն ու մնացորդները:

29.1 Առանցքային ղեկավար անձնակազմի փոխհատուցումը

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	175,538	191,595
	175,538	**191,595**

29.2 Ապրանքների վաճառք և ծառայությունների մատուցում փոխկապակցված անձանց

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Այլ փոխկապակցված կազմակերպություններ	-	12,226
	-	**12,226**

29.3 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերի նկատմամբ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	134,064	100,938
	134,064	**100,938**

30. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐ

30.1 Վարկեր և փոխառություններ

Ներկա պահին Խմբի ժամկետանց վարկային պարտավորությունները կազմում են են շուրջ 14.9 միլիոն ԱՄՆ դոլար և 13.5 միլիոն Եվրո:

Վերը նշվածի առնչությամբ, 2021թ-ի փետրվարի 19-ին, Ընկերության միջազգային կրեդիտորների երեք խոշորագույն վարկատու կազմակերպությունների նախաձեռնությամբ, համաշխարհային խոշորագույն խորհրդատվական ընկերությունների «Մեծ Քառյակի» անդամ հանդիսացող ընկերությանը հանձնարարել են կատարել Ընկերության գործունեության Անկախ Բիզնես Ուսումնասիրություն (Independent Business Review), որի նպատակներից է բավարար հիմքեր ստեղծել միջազգային կրեդիտորների համար ժամկետանց վարկային պայմանագրերի պայմանների վերանայման համար:

Շրջանառու կապիտալի կարիքները հոգալու նպատակով, 2021 թվականի փետրվարի 4-ին Խումբը լրացուցիչ կարճաժամկետ վարկային պայմանագիր է կնքել տեղական բանկի հետ 50,000 հազար ՀՀ դրամ գումարի համար՝ տարեկան 3% պետության կողմից սուբսիդավորված տոկոսադրույքով, կաթի մթերման նպատակով, իսկ 2021 թվականի ապրիլի 29-ին նույն բանկի հետ կնքել է 541,000,000 ՀՀ դրամի, 8 տարի մարման ժամկետով, պետության կողմից սուբսիդավորված ինտենսիվ այգի հիմնելու նպատակով տրամադրված վարկի պայմանագիր՝ համաձայն համապատասխան պետական աջակցման ծրագրի դրույթների:

2021 թ-ի փետրվար-ապրիլ ամիսներին շրջանառու կապիտալի կարիքները հոգալու նպատակով տեղական բանկը տրամադրել է մեկ տարի մարման ժամկետով, 7.5% տարեկան տոկոսադրույքով, 2,855,000 ԱՄՆ դոլարի վարկ:

30.2 Պարտատոմսերի թողարկում

2021թ-ի ապրիլի 8-ին Ընկերության միակ մասնակիցը ընդունել է որուշում՝ թողարկել ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով արտահայտված ոչ փոխարկելի, արժեկտրոնային, անվանական, ոչ փաստաթղթային պարտատոմսեր հետևյալ պայմաններով՝ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույն թողարկման ծավալը՝ 8,500,000 ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 1,000,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ՀՀ դրամով արտահայտված 10%-ի չափով: Պարտատոմսերի տեղաբաշխումը նախատեսվում է կատարել 2021թ. հունիս ամսում, իսկ տեղաբաշխումից ստացված դրամական միջոցների ամբողջ ծավալը ուղղվելու է 2019թ-ին թողարկված պարտատոմսերի մարմանը:

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1. Ներածություն

Սույն հաշվետվությունը ներկայացնում է «Սպայկա» ՍՊ ընկերության (այսուհետ նաև Սպայկա կամ Ընկերություն) 2020 թվականի գործունեության արդյունքները և հետագա զարգացման նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

2. «Սպայկա» ՍՊ ընկերության գործունեության ընդհանուր նկարագիր

«Սպայկա» ՍՊԸ հիմնադրվել է 2001թ. Ընկերության միակ բաժնետեր և գլխավոր տնօրեն Դավիթ Ղազարյանի կողմից՝ որպես Հայաստանի Հանրապետությունից դեպի ԱՊՀ ու ԵՄ երկրներ և հակառակ ուղղություններով միջազգային բեռնափոխադրումների իրականացնող ընկերություն՝ ընգրկելով նաև սևծովյան մուլտիմոդալ բեռնափոխադրումների ուղղությունը: Ներկայումս ընկերության գործունեությունը ներառում է տրանսպորտի, ինտենսիվ այգիների, ինտենսիվ ջերմոցների, պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարանի, պանրի արտադրության, բեռնատարների տեխնիկական սպասարկման, ԵՄ, ԱՊՀ, Մերձավոր Արևելյան շուկաներում առևտրային գործունեության ուղղությունները:

2007-ին Ընկերությունը Միջազգային ճանապարհային բեռնափոխադրումների գործակալության կողմից ճանաչվեց ԱՊՀ լավագույն բենափոխադրող, իսկ 2008թ.-ից թարմ մրգի և բանջարեղենի արտահանման նպատակով կառուցեց առաջատար տեխնոլոգիայով հագեցած սառնարանային լոգիստիկ կենտրոն՝ ներկայումս շահագործելով մոտ 20 հազար տոննա տարողությամբ համալիր:

2009թ. Ընկերությունը սկսեց «Արարատֆրուտ» բրենդի ներքո թարմ միրգ-բանջարեղենի արտահանումը և վաճառքը Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) մեծածախ ու մանրածախ շուկաներում:

2010թ.-ց մինչև այսօր Ընկերությունը համալրում է շարժակազմը «VOLVO» մակնիշի նոր սառնարան-բեռնատարներով՝ 2019-ին հասցնելով դրանց թիվը 315-ի և դառնալով VOLVO TRUCKS և SCHMITZ CARGOBULL սառնարան-բեռնատարների ներկայացուցիչ:

2010-2012 թթ-ին Ընկերությունը հիմնեց պլաստիկ արկղերի արդյունաբերական արտադրություն՝ հրաժարվելով փայտե արկղերի կիրառումից որպես շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության դրսևորում:

2015թ-ից. շահագործման հանձնվեց պահածոների կոմպոտի և հյութերի իտալական տեխնոլոգիաներով արտադրություն՝ «Արարատֆուդ» ապրանքանիշի ներքո:

2017թ. Ընկերությունը Գրինհաուզ և Կովկասֆուդ ընկերությունների բաժնեմասի ձեռքբերմամբ հաստատվեց ջերմոցային և ինտենսիվ այգիների ոլորտում՝ միաժամանակ կառուցելով սեփական ջերմոցային համալիր (105ՀԱ գերժամանակակից ջերմոցներ) ու ընդլայնելով ինտենսիվ այգիները (460ՀԱ):

2018թ-ին Ընկերությունը ցամաքային ճանապարհով բեռնափոխադրումներ սկսեց դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ):

2019թ. շահագործման հանձնվեց «Սամբիել» բրենդի ներքո տարեկան 2.000 տոննա արտադրողականությամբ կապույտ և սպիտակ բորբոսով պանրի գործարանը:

2019թ.-ին Ընկերությունը ստացավ Global G.A.P. և ISO 22000 սննդի անվտանգության կառավարման սերտիֆիկատներ:

2020թ.-ի հունվարին Ընկերությունը ստացավ BRC սննդամթերքի փաթեթավորման, պահեստավորման և բաշխման հավաստագիր: Այպիսով, Ընկերությունը հնարավորություն ստացավ ուղիղ մատակարարումներ իրականացնել Մեծ Բրիտանիայի և ԵՄ երկրների մանրածախ առևտրային ցանցերին:

2020թ.-ին ստեղծվեց VitaFresh ապրանքանիշը, որով գյուղմթերքն արտահանվում է եվրոպական երկրներ:

2020թ.-ի նոյեմբերից Ընկերությունը ՀՀ-ում ինտենսիվ այգի հիմնելու ծառայություն է մատուցում՝ կիրառելով այդ բնագավառում արդեն իսկ ձեռք բերած հարուստ փորձառությունը և տեխնոլոգիական առաջադիմությունը:

2020թ.-ի դեկտեմբերին Ընկերությունը բացեց ՈՉՆԻ Fresh Market խանութների ցանցը, որի միջոցով Ընկերությունը իրականացնում է սեփական, ինչպես նաև հայկական ֆերմերների արտադրանքի իրացումը:

Ընկերության առաքելությունն է արտահանմանը միտված ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը Հայաստանում՝ համայնքների կայուն զարգացմանը և ներառական տնտեսության կայացմանը նպաստելու միջոցով:

3. Ֆինանսական վերլուծություն, 2020թ

Ամփոփ ֆինանսական գործակիցներ.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2020թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	Կիրառելի չէ
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-40.6%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-12%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-52.7%
Կապիտալի համարժեքության գործակից	0.23
Ֆինանսական կախվածության գործակից	3.28
Բացարձակ իրացվելիության գործակից	0.00
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.22
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.35
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.7
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	78.3
Պաշարների շրջանառելիության գործակից	3.6
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	102.5
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	9.4
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	38.8

4. Ընկերության արտադրական պլան, 2021թ.կանխատեսում

Ընկերությունը 2021թ. դեկտեմբերից նախատեսում է ջերմոցներում անցնել այսպես կոչված «ամառային» ցիկլի, որը ենթադրում է սածիլների տարեկան վերատնկման գործընթացի իրականացում ձմռան ամիսներին և, հետևապես, ձմեռային ամիսների արտադրությունից անցում գարնանային, ամառային և աշնանային ամիսների, ինչպես նաև դեկտեմբեր ամիսը ներառյալ: Ներկայում կիրառվող արտադրական «ձմեռային» ցիկլի դեպքում ջերմոցների սածիլների տարեկան վերատնկման գործընթացը կատարվում է ամռան ամիսներին, ուստի օգոստոսից-հոկտեմբեր ամիսներին ջերմոցային բանջարեղեն չի արտադրվում: Այս անցման արդյունքում Ընկերությունը նախատեսում է ունենալ լոլիկի առավել բարձր բերքատվություն՝ առնվազն 57 կգ/ք.մ. (պայմանավորված առավել տաք եղանակային պայմաններում արտադրության կազմակերպմամբ), ի տարբերություն «ձմեռային ցիկլի» 38 կգ/ք.մ. ցուցանիշի (ակնկալվում է, որ 12 ամսվա կտրվածքով սա կապահովի լրացուցիչ 19,000 տոննա լոլիկի բերք (1 կգ լոլիկի իրացման միջին արժեքը՝ 1.3 ԱՄՆ դոլար)), ինչպես նաև ակնկալում է, որ կստանա գազի սպառման տնտեսում ձմռան ամիսներին՝ մոտ երկու ամսվա չափով՝ մոտ 1,700 մլն դրամ: Արտադրական ցիկլի անցման հետ կապված կապիտալ ներդրումները ըստ պլանավորման պետք է կազմեն մոտ 1,500 մլն. դրամ, որը նախատեսվում է ֆինանսավորել վերը նշված խնայված միջոցների հաշվին: Արտադրական ցիկլի փոփոխության արդյունքում ստացված հավելյալ բերքը նախատեսվում է վաճառել ՌԴ-ում:

		Ամիսներ												Ընդամենը տարի
		1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	
ՀՀ-ից մթերումներ	տ	-	-	-	-	100	3,900	3,600	1,400	2,000	4,000	5,000	1,000	21,000
Վերաարտահանում	տ	740	900	500	500	200	400	3,000	3,000	-	2,400	1,500	3,500	16,640
Սեփական արտադրանք	տ	1,800	2,140	3,080	5,380	6,780	7,580	5,060	1,880	1,200	5,940	4,560	2,080	47,460
Տրանսպորտային ծառայություններ, առաքում	հատ	135	222	240	355	346	332	477	235	324	583	574	587	4,410

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Դավիթ Ղազարյան	Տնօրենների խորհրդի նախագահ / Գլխավոր տնօրեն	✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից. ✓ ներկայացնում է Ընկերությունն այլ անձանց հետ հարաբերություններում ՀՀ տարածքում և արտերկրում. ✓ գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր. ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային. ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ. ✓ Ընկերության Մասնակիցների ընդհանուր ժողովի կամ Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում կազմված նախագծեր վերջիններիս իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ. ✓ կազմակերպում է Մասնակիցների ընդհանուր ժողովի, Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը. ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը:

Կարեն Բաղդասարյան	Զարգացման գծով տնօրեն / Տնօրենների խորհրդի անդամ	✓ մշակում, ներդնում է Ընկերությյան զարգացման ուղղված նոր նախագծեր. ✓ կատարում է Ընկերության զարգացմանն ուղված ծրագրերի մշակում, նոր նախագծերի գործարկում. ✓ որոշում է ծրագրվող նախագծերի նպատակները, նախնական ժամկետները, անհրաժեշտ ռեսուրսների քանակը և արժեքը. ✓ համագործակցում և անհրաժեշտության դեպքում Ընկերության շայերը ներկայացնում է նոր կամ գործընկեր միազգային կառույցների հետ շփումներում. ✓ համակարգում է ընկերության ոչ արտադրական ստորաբաժանումների գործունեությունը. ✓ գլխավոր տնօրենի հրամանով նախատեսված դեպքերում համակարգում է ընկերության այլ ստորաբաժանումների գործունեությունը. ✓ գլխավոր տնօրենի հանձնարարությամբ համակարգում է ընկերության առանձին ծրագրերի իրագործումը:
Սամվել Ստեփանյան	Ֆինանսական տնօրեն	✓ կազմակերպում է Ընկերության ֆինանսական ռեսուրսների կառավարումը և ֆինանսական հարաբերությունների կարգավորումը. ✓ կոորդինացնում Ընկերության ֆինանսատնտեսական վիճակը վերլուծող աշխատանքների իրականացումը. ✓ իրականացնում է Ընկերության ակտիվների, ֆինանսական ներդրումների ղեկավարումը:

Խորեն Ասատրյան	Գլխավոր հաշվապահ	✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական և հարկային հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը. ✓ պատասխանատու է հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման համար. ✓ սահմանում է Ընկերության գործունեության հետ կապված արտադրատնտեսական ֆինանսավորման աղբյուրները. ✓ հետևում է հաշվապահական փաստաթղթերի ճիշտ և ժամանակին կազմմանը, հաշվետվությունների և պարտավորությունների իրականացմանը: